ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4251-Ա « 31 » օգոստոսի 2026թ.

ԴԱՎԹԱՇԵՆԻ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ Հ. 50/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/53399 եզրակացությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20022013-2460 վկայականը և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հ.01/11.1/8839-2026թ. գրությունը:

Տեղագրական հանույթի ճշգրտման արդյունքում պարզվել է, որ համայնքային սեփականություն հանդիսացող Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.50/8 հասցեում գտնվող, «Ա.Տերտերյանի անվան արվեստի դպրոցի» զբաղեցրած և կից նոր մասնաշենքի կառուցման համար անհրաժեշտ հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 8381.16քմ:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող հողամասի մի մասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման, իսկ մի մասը՝ ընդհանուր օգտագործման հողերի գոտում: ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հ.01/11.1/8839-2026թ. գրությամբ առարկություններ չի ներկայացվել քննարկվող հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի փոփոխելու առաջարկության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի քննարկվող հողամասը գտնվում է 5-րդ գոտում /հողամասի ծածկագրեր՝ 01-004-106-001 և 01-004-0106-0003/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ և 20-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/53399-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.50/8 հասցեում գտնվող հողամասի մակերեսը կազմում է 8381.16քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով՝ չեղյալ համարելով հողամասի նախկինում թողարկված հ.3983-2012 հատակագիծը:

2.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.50/8 հասցեում գտնվող 8381.16քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հասարակական կառուցապատման:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ